

# ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՄԵԼԱՆՔԹՈՆ ԵՒ ՀԱՅԿ ԱՐՍԼԱՆԵԱՆ ՃԵՄԱՐԱՆ

Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութիւնը հիմնուած է Գահիրէի մէջ (Եգիպտոս) 28 Մայիս 1928-ին, «Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Ընկերութիւն» անունով: Գլխաւոր հիմնադիրներն էին Համօ Օհանջանեանը, Լեւոն Շանթը, Նիկոլ Աղբալեանը, Գասպար Իփէկեանը եւ ուրիշներ: Ընկերութեան (1990-էն ետք՝ Միութեան) գլխաւոր նպատակն էր «հասնող սերունդին կրթութիւնը, հասակաւորներու ինքնագարգացումը եւ հայագիտութեան մշակումը»: Համազգայինի հիմնադիրները կը դաւանէին, որ «ազգային ոգին, դաստիարակութիւնը եւ մշակոյթը համահայկական են», հետեւաբար նպատակ կը դնէին «զարգացնել հայ մշակոյթը եւ լեզուն ապակուսակցական, ապահատուածական, ապադաւանական եւ ապատեղացիական ոգիով»:

Իր նպատակներուն իրագործման համար, Համազգային ընկերութիւնը 3 Մարտ 1930-ին Պէյրութի մէջ (Լիբանան) կը հիմնէ Հայ Ճեմարանը : Հայ Ճեմարանի նպատակն «հասնող սերունդին կրթութիւն» ջանքելով պատրաստութիւնը վաղուան մտաւորական սերունդին, որ իր վրայ պիտի վերցնէր սփիւռքի մէջ հայապահպանման, հայ լեզուին ու գրականութեան եւ հայ մշակոյթին զարգացման պատասխանատուութիւնը:

Քաղաքական ու ընկերային պայմաններու թելադրանքով փոփոխութիւններու ենթարկուելով հանդերձ, Հայ Ճեմարանը, 1950-էն ետք Նշան Փալանճեան Ճեմարան եւ 1986-էն ի վեր Մելանքթոն եւ Հայկ Արսլանեան Ճեմարան անուանումով, պահպանած է իր սկզբնական նկարագիրը. ուսման եւ կրթութեան ճամբով «լաւ մարդեր եւ լաւ հայեր» դաստիարակել, այսինքն՝ ընդհանուր գիտութեան տէր, հայեցի դիմագիծ ունեցող, հայ մշակոյթին, հայկական ասանդութիւններուն քաջածանօթ, Հայաստանին ու Հայ Դատին նուիրուած յանձնառու նոր սերունդ նուիրել հայութեան:

## Ա.- ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Մ. եւ Հ. Արսլանեան Ճեմարանը տեղակայուած է Անթիլիասի մերձակայ բլուրներէն Մըզիերի (Ծաղկաձոր) կողին, 26000 քառակուսի մեթր տարածութեամբ հողաշերտի մը վրայ: Իրարու կպած երեք շէնքեր (դպրոցի թիւ 1 եւ թիւ 2 մասնաբաժինները եւ Տոքթ. Ատրիմէ Գարագաշեան մարզամշակութային համալիրը) եւ անջատ ընդարձակ ՀՕՄ-ի Նորսիկեան մանկապարտէզը կը գրաւեն կալուածին աւելի քան կէսը: Շէնքերուն կողքին, ինչպէս նաեւ մանկապարտէզէն ներս, գոյութիւն ունին պտղատու ծառերու ընդարձակ պարտէզներ եւ ծառազարդ խաղավայրեր:

Բացի ընդարձակ ու լուսաւոր դասասրահներէն, Ճեմարանը օժտուած է ուսումնական բազմաթիւ յարմարութիւններով. գրադարաններ, էլեկտրոնային գրադարան, գիտաշխատանոցներ, համակարգչային դասասրահ, լուսարձակման սրահ, հեռատեսիլի ու վիտէոյի սրահ, փոքր թատերասրահ, երաժշտական սրահ, ճատրակի սրահ, մարզասրահներ, քննութիւններու եւ հաւաքոյթի սրահներ, խաղավայրեր, եւայլն: Ուսուցիչներու եւ աշակերտներու տրամադրութեան տակ են բազմաթիւ դաշնամուրներ, երաժշտական գործիքներ, համակարգիչներ,

հեռատեսիլներ, ձայնասփիռներ, լուսարձակներ, քարտեզներ եւ այլ բազմաթիւ գործիքներ ու իրեր:

Դպրոցի աշակերտութիւնն ու պաշտօնէութիւնը ապահովագրուած են դպրոցական ժամերուն կամ դպրոցի հսկողութեան տակ կատարուող միջոցառումներու ընթացքին պատահող արկածներու դէմ:

Ճեմարանը կը կիրարկէ միջին տարողութեամբ կրթաթոշակի եւ փոխադրավարձքի սակագին, որ էապէս նուազ է նման ծառայութիւններ մատուցող լիբանանեան կրթական հաստատութիւններու կիրարկած սակագիներէն: Արձանագրութեան տուրքը (150 000 Լ.Ռ. կամ 100 ԱՄՆ տոլար) եւ ընդհանուր ծախսաբաժինը (600 000 Լ.Ռ. կամ 400 ԱՄՆ տոլար), պարտադիր են բոլորին: Ձեռչի ենթակայ չէ նաեւ փոխադրավարձքը, որուն համար կը կիրարկուին տարբեր սակեր, ըստ հեռաւորութեան: Բուն կրթաթոշակը, փոփոխական ըստ դպրոցական բաժանմունքի, միջին հաշուով 2 775 000 Լ.Ռ. (1850 տոլար) է (նուազագոյնը՝ 1350 տոլար, առաւելագոյնը՝ 2400 տոլար): Կրթաթոշակը ենթակայ է գեղչի, յատուկ դիմումի եւ ընկերային յանձնախումբի կատարած ուսումնասիրութեան հիման վրայ:

Կրթաթոշակի եւ այլ ծախսերու վճարման եղանակը հետեւեալն է.

- Մուտքի տուրքը կը վճարուի արձանագրութեան ատեն:
- Ընդհանուր ծախսաբաժինը՝ դպրոցական տարեշրջանի սկիզբը:
- Բուն կրթաթոշակը կարելի է վճարել.
  - 3 մասնավճարով,
  - 8 մասնավճարով,
  - 11 մասնավճարով:

Վճարման եղանակը կ'ընտրեն ծնողները, արձանագրութեան ատեն:

- Փոխադրավարձքը կը վճարուի ամսական դրութեամբ, ութ մասնավճարներով:

## **Բ.- ԾԵՄԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳՐ**

Ճեմարանի ուսումնական հայեցակարգը, հիմնադրութեան օրերէն, ներշնչուած է Ֆրանսականէն: Աւելի ուշ, լիբանանեան ուսումնական ծրագիրներու հրապարակման եւ լիբանանեան պետական վկայականներու պարտադրութեան հետեւանքով, նկատի առնուած են նաեւ այս վերջինները: Ֆրանսական եւ անոնց հետեւողութեամբ կազմուած լիբանանեան ծրագիրներու կողքին, Ճեմարանի ուսումնական հայեցակարգը կը կարելորէ հայեցի դաստիարակութիւնը, շեշտը դնելով հայերէն լեզուի, հայոց պատմութեան եւ հայ մշակոյթի աւանդման առաջնահերթութեան վրայ:

Ճեմարանի մէջ կը դասաւանդուին.

ա.- Լեզուներ. հայերէն, արաբերէն, ֆրանսերէն եւ անգլերէն: Հայերէն լեզուն, իբրեւ հիմք հայեցի դաստիարակութեան եւ գլխաւոր ազդակ հայ ինքնութեան պահպանման, կը վայելէ յատուկ կարգավիճակ:

բ.- Ուսողութիւն (թուարանութիւն):

գ.-Գիտութիւններ (բնագիտութիւն, քիմիագիտութիւն, կենսաբանութիւն, երկրաբանութիւն, եւն.):

դ.- Մարդկային ուսմունք եւ պատմութիւն:

ե.- Գեղագիտական դաստիարակութիւն:

գ.- Ֆիզիքական եւ մարզական դաստիարակութիւն:

Ճեմարանի աշակերտները, լեզուներու, հայ եւ օտար գրականութիւններու, պատմութեան, ընկերային նիւթերու, ուսողութեան, գիտութիւններու, գեղագիտական եւ մարզական պարապմունքներու միջոցով կը պատրաստուին լիբանանեան պրըլէի (Թ դասարան), լիբանանեան ու Ֆրանսական պաքալորէաներու (ԺԲ դասարան) եւ համալսարանական բարձրագոյն ուսման: Հայեցի դաստիարակութեան ասպարէզին մէջ կը կարելորուի ծանօթութիւններու ջանքումը եւ ազգային գիտակցութեան ամրագրումը:

Մանկավարժական յատուկ մօտեցումով աւանդուած դասերը եւ Ճեմարանի յատուկ եզակի մթնոլորտը կ'ապահովեն աշակերտութեան մտաւոր եւ հոգեկան ներդաշնակ զարգացումը՝ ճեմարանական « լաւ մարդու եւ լաւ հայու » կազմաւորումը:

Աւելի մասնաւորելով, ճեմարանական լաւ մարդը եւ լաւ հայը օժտուած պէտք է ըլլայ ծանօթութիւններու լայն պաշարով ու նկարագրային բարձր յատկանիշներով:

### **Մարդկային ու քաղաքացիական յատկանիշներ.**

- Ինքնաճանաչում եւ գիտակից կարգապահութիւն:
- Համարձակութիւն եւ ինքնագսպում. պատասխանատուութեան զգացողութիւն:
- Արդարամտութիւն եւ արժանապատուութեան զգացողութիւն:
- Այլասիրութիւն, հանդուրժողականութիւն, ուրիշներու նկատմամբ յարգանք եւ ընկերասիրութիւն:
- Ազատամտութիւն, մտածումի անկախութիւն եւ քննական միտք:
- Աշխատանքի սէր, ջանասիրութիւն:
- Կենցաղավարութիւն, քաղաքավարութիւն եւ համեստութիւն:
- Քաղաքացիական գիտակցութիւն:

### **Հայ ազգային յատկանիշներ.**

- Գիտակցութիւն եւ արժեւորում հայկական մշակութային ինքնուրոյնութեան:
- Մշակութային ստեղծագործական մօտեցում:
- Հայաստանի ու հայութեան ներկայութիւն աշակերտներու հոգեկան աշխարհին մէջ. Հայաստանի ու Սփիւքի լրացուցիչ ըլլալու գիտակցութիւն:
- Կրկնակ պատկանելիութեան գիտակցութիւն (Հայաստան եւ քննական վայր). ազատ եւ ստեղծագործ հայ քաղաքացիի կազմաւորում:

## **Գ.- ՃԵՄԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆԵՐՔԻՆ ԿԱՌՈՒՑՈՒՄԾԸ**

Համազգայինի Մ. եւ Հ. Արսլանեան Ճեմարանը ուսումնական համապարփակ հաստատութիւն է եւ օժտուած է նախահամալսարանական ուսման բոլոր բաժիններով:

ա.- Մանկամտր, 1-էն 3 տարեկան փոքրիկներու համար, փոքրերու եւ մեծերու երկու դասարաններով:

բ.- Մանկապարտէզ, 3-էն 5 տարեկան փոքրիկներու համար, Վարդագոյն, Կապոյտ եւ Կանաչ դասարաններով:

գ.- Տարրական բաժին, 6-էն 8 տարեկան աշակերտներու համար, Ա., Բ. եւ Գ. դասարաններով:

դ.- Նախակրթարան, 9-էն 11 տարեկան աշակերտներու համար, Գ., Ե., եւ Զ. դասարաններով:

ե.- Միջնակարգ բաժին, 12-էն 15 տարեկան աշակերտներու համար, Է., Ը. եւ Թ. դասարաններով:

զ.- Երկրորդական (Լսարանական) բաժին 16-էն 18 տարեկան աշակերտներու համար, Ժ., ԺԱ. եւ ԺԲ. դասարաններով:

Իւրաքանչիւր բաժին օժտուած է պատասխանատուով մը, որ տնօրէնութեան ներկայացուցիչի հանգամանքով կը համակարգէ բաժնի ուսումնական եւ կրթական աշխատանքները, կը հսկէ կարգապահութեան եւ կը պահէ յարաբերութիւնը ծնողներու հետ:

Աւանդուող դասերու ծրագիրներուն գործադրութեան եւ մեթոտական միօրինակութեան ապահովման կը հսկեն դասանիւթերու համակարգող ուսուցիչները: Համակարգող ուսուցիչներ կան Հայերէնի եւ Հայոց Պատմութեան, Արաբերէնի, Ֆրանսերէնի, Ռուողութեան, Գիտութեան եւ Ընկերային նիւթերու համար: Համակարգող ուսուցիչները պարբերական կանոնաւոր հանդիպումներ կ'ունենան իրենց նիւթի դասաւանդ ուսուցիչներուն հետ, կը հետեւին ծրագիրներու գործադրութեան ընթացքին, կը ստուգեն գրաւոր աշխատանքները եւ քննութիւնները, կ'օժանդակեն ուսուցիչներուն երբ մեթոտական դժուարութիւններ ծագին: Անոնք կը գումարեն նոյն նիւթը դասաւանդող ուսուցիչներու խորհրդակցական հանդիպումներ:

Ճեմարանի աշակերտութեան արտադասարանային գործունէութեան կազմակերպումը, աշակերտներու ելքն ու մուտքը, զբօսանքներու եւ ազատ պահերու հսկողութիւնը կ'իրականացնէ ընդհանուր հսկիչ մը, որ այդ աշխատանքին համար կ'ունենայ մէկ կամ երկու օգնականներ:

## **Գ.- ՃԵՄԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՈՒՄԸ**

Մ. եւ Հ. Արսլանեան Ճեմարանը սեփականութիւնն է Համազգային Կրթական եւ Մշակութային Միութեան: Համազգայինի Կեդրոնական Վարչութիւնը Ճեմարանի ուսումնական, կրթական, վարչական եւ տնտեսական աշխատանքներուն վերահսկողութեան համար կը նշանակէ Խնամակալութիւն մը:

Ճեմարանը գործնապէս կը կառավարէ Տնօրէնը, որ կը նշանակուի Համազգայինի Կեդրոնական Վարչութեան կողմէ:

Տնօրէնին կ'օժանդակեն երկու փոխ-տնօրէններ. ուսումնական-կրթական գործերը համակարգող կրթական տեսուչ մը եւ վարչական-տնտեսական գործերը վարող վարչական պատասխանատու մը:

Ուսումնական օժանդակ պաշտօնէութիւնը (ընկերային ծառայող, դպրոցական հոգեբան, առողջապահութեան պատասխանատու) կ'աջակցի տնօրէնութեան եւ ուսուցիչներուն ուսումնական եւ կրթական աշխատանքներուն:

Ճեմարանի փոխ-տնօրէնները, զանազան բաժանմունքներու պատասխանատուները, ուսումնական օժանդակ պաշտօնէաները եւ ընդհանուր հսկիչը, տնօրէնին նախագահութեամբ կը կազմեն Ճեմարանի Խորհուրդը, որ կը գումարուի շաբաթական հերթականութեամբ ու կը քննէ դպրոցավարական ընթացիկ գործերը (դասեր, հարցաքննութիւններ, ներքին ու արտաքին ձեռնարկներ, եւ այլն): Ճեմարանի Խորհուրդը կը հանդիսանայ ուսուցչական կազմի ու

տնօրէնութեան միջեւ կապի գլխաւոր օղակը: Դեմարանի Խորհուրդի բոլոր որոշումները պէտք է արժանանան տնօրէնին հաւանութեան:

Դեմարանի տնօրէնութեան կից կը գործեն նաեւ Ծնողական Խորհուրդը եւ Հայ Դեմարանի Շրջանաւարտներու Միութիւնը:

## **Ե.- ԱՇԱԿԵՐՏՈՒԹԻՒՆ**

### **1.- Դեմարան ընդունման պայմաններ**

Դեմարանի Նորսիկեան Մանկապարտէզի Վարդագոյն դասարան կ'ընդունուին այն հայ երեխաները, որոնք համաձայն Լիբանանի Կրթական Նախարարութեան կողմէ հաստատուած կանոնին, տուեալ տարեշրջանի Յունուար ամսուան աւարտին կ'ամբողջացնեն երեք տարիքը: Այլ խօսքով, տարեշրջանի սկիզբը՝ 1 Հոկտեմբերին, երեխան պէտք է ըլլայ առնուազն երկու տարեկան եւ ութ ամսու: Միւս կողմէ, երեխան պէտք է ըլլայ Ֆիզիքապէս եւ հոգեպէս առողջ, ազատօրէն տեղափոխուի եւ հաղորդակցի:

Տարրական բաժնի Առաջին դասարան կրնան ընդունուիլ այն հայ երեխաները, որոնք տուեալ տարեշրջանի Յունուար ամսուան աւարտին կ'ամբողջացնեն 6 տարիքը: Ուրիշ խօսքով, տարեշրջանի սկիզբը՝ 1 Հոկտեմբերին, երեխան պէտք է ըլլայ առնուազն հինգ տարեկան եւ ութ ամսու:

Մնացած դասարաններու պարագային՝ կը կիրարկուին դասարանափոխութեան կանոնները:

Դեմարանի աշակերտներու Ժ. դասարան ընդունումը պայմանաւորուած է, ըստ օրինի, լիբանանեան պրըլէի յաջողութեամբ: Այսուհանդերձ, նոյնիսկ պրըլէի յաջողութեան պարագային, Դեմարանի մէջ կիրարկուող կարգափոխութեան կանոնները կը մնան ի գորտ:

Չանազան դասարաններ դիմող նորեկ աշակերտները պէտք է ներկայացնեն իրենց նախորդ դպրոցէն վիճակացոյց, բարի վարուց վկայագիր, փոխանցման պաշտօնական վաւերագիր եւ ինքնութեան վաւերագիր: Նորեկ աշակերտներու Դեմարան ընդունումը կ'որոշուի մուտքի քննութեան արդիւնքներու հիման վրայ:

### **2.- Գնահատման դրութիւն**

Դեմարանի մէջ կը կիրարկուի կիսամեակներու դրութիւնը: Ե. դասարանէն սկսեալ աշակերտները կ'ենթարկուին երկու ընդհանուր քննութեան. առաջին կիսամեակի աւարտին (Փետրուար ամիս) եւ երկրորդ կիսամեակի աւարտին (Յունիս ամիս):

Իւրաքանչիւր կիսամեակ բաժնուած է երկու մօտաւոր երկամիսներու: Երկամիսներու աւարտին ծնողները կը ստանան իրենց զուակներուն աշխատանքն ու յառաջդիմութիւնը ցոյց տուող վիճակացոյց մը:

Երկամիսներու արդիւնքները ուսուցիչներուն կողմէ կը գնահատուին երկու ամիսներու ընթացքին կատարուած պարտականութիւններու, բանաւոր եւ գրաւոր հարցաքննութիւններու հիման վրայ: Իւրաքանչիւր բաժնի եւ իւրաքանչիւր դասարանի մէջ, դաստիարակ ուսուցչին եւ բաժնի պատասխանատուին կողմէ կը կատարուի գրաւոր աշխատանքներու եւ գրաւոր հարցաքննութիւններու բաշխում, աշակերտները աւելորդ ծանրաբեռնումէ զերծ պահելու համար: Նման բաշխումի

առկայութիւնը չի նշանակեր սակայն, որ աշակերտները կրնան չպատրաստել իւրաքանչիւր օրուան դասը կամ չկատարել տրուած պարտականութիւնները:

Կիսամեայ միջինները կը հաշուուին երկու երկամիսներու ու կիսամեայ քննութեան նիշերու գումարը բաժնելով 3-ի:

Իւրաքանչիւր դաս ունի իր վարկանիշը, որ կը համապատասխանէ շաբաթական պահերու թիւին: Տարեկան ընդհանուր միջինը կը ստացուի դասերու վերջնական միջինները բազմապատկելէ ետք համապատասխան վարկանիշերով եւ գումարը բաժնելով վարկանիշներու ընդհանուր գումարով:

Մարզանքի, երգի, պարի, նկարչութեան, ձեռային աշխատանքի եւ համակարգիչի դասի արդիւնքները կը տրուին տարին երկու անգամ. այս արդիւնքները դուրս կը մնան ընդհանուր միջիններու հաշուառումէն:

Կիսամեայ եւ ամսավերջի վիճակացոյցները, բացի միջիններէն, կը պարունակեն աշակերտին աշխատանքը, յառաջդիմութիւնը եւ կեցուածքը բնութագրող կարճ գնահատական մը: Գնահատականին տուեալները կը տրամադրեն դասաւանդ ուսուցիչները, անոնց համադրումը կը կատարէ բաժնի պատասխանատուն, վերանայումը՝ տնօրէնը:

Տարեշրջանի ընթացքին, երբ կարիքը զգացուի, կը կազմակերպուին վերապատրաստման յատուկ դասընթացքներ, փոքրաթիւ խումբերով, դարմանելու համար աշակերտներու ծանօթութիւններու պակասը կամ դասերը ըմբռնելու համար դիմագրաւած դժուարութիւնները:

### **3.- Դասարանափոխութեան պայմաններ**

Ճեմարանի մէջ դասարան փոխելու համար, աշակերտները պէտք է լրացնեն երկու պայմաններ.

ա.- Տարեկան ընդհանուր միջինը պէտք է ըլլայ նուազագոյնը 12/20 Տարրականի եւ Նախակրթարանի, 10/20 Միջնակարգի եւ Երկրորդականի մէջ:

բ.- Հիմնական նիւթերը (լեզուներ, ուսողութիւն, գիտութիւն) պէտք է ունենան անցնող միջին:

Եթէ աշակերտը մէկ կամ աւելի նիւթերու մէջ բաւարար միջին չէ ապահոված, կարգափոխութեան մասին որոշումը կը յետաձգուի եւ կ'որոշուի վերաքննութենէ ետք:

Վերաքննութիւնները, ինչպէս նաեւ նորեկ աշակերտներու ընդունելութեան քննութիւնները տեղի կ'ունենան Յուլիս ամսուան աւարտին: Վերաքննութիւններու պատրաստութեան համար կը կազմակերպուի, Յուլիս ամսուան ընթացքին, երեք շաբաթ տեւողութեամբ յատուկ դասընթացք:

Եթէ տարեկան միջինը առնուազն 9,5 է, կարգափոխութեան հարցը կը քննուի ուսուցչական ժողովին կողմէ, նկատի առնելով աշակերտին աշխատանքը եւ տարուան ընթացքին ունեցած յառաջդիմութիւնը. ուսուցչական ժողովը դասարանափոխութեան մասին իր եզրակացութիւնը կը փոխանցէ տնօրէնութեան, որ կը վճռահատէ, խորհրդակցելէ ետք բաժնի պատասխանատուին հետ:

## **ԿԱՐԳԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ**

1.- Բարձրագոյն նիշը 20 է: Միջին նիշը՝ 10 միջնակարգի եւ երկրորդականի մէջ, 12 նախակրթարանի եւ տարրականի մէջ: Նիւթի մը մէջ 10-էն նուազ նիշ ունեցողը վերաքննելի կը համարուի այդ նիւթին մէջ:

2.- Աշակերտը կը փոխէ իր դասարանը, եթէ իր տարեկան ընդհանուր միջինը առնուազն 10 է (միջնակարգ եւ երկրորդական) եւ 12 (տարրական եւ նախակրթարան) եւ ոչ մէկ վերաքննելի նիշ ունի:

3.- Եթէ նիւթի մը մէջ աշակերտը 10-էն նուազ նիշ ունենայ, վերաքննութեան կ'ենթարկուի: Գ-ասարան փոխելու համար, աշակերտը պէտք է յաջող նիշ ապահովէ բոլոր վերաքննելի նիւթերուն:

4.- Աշակերտը իր դասարանը կը կրկնէ, երբ.

ա.- Իր տարեկան ընդհանուր միջինը 10-էն պակաս է (միջնակարգ եւ երկրորդական) եւ 12-էն պակաս (տարրական եւ նախակրթարան):

բ.- Երբ վերամուտի վերաքննութեան նիւթի մը մէջ 10-էն պակաս նիշ կ'ունենայ:

5.- Աշակերտին կը տրուի իւրաքանչիւր բաժանմունքի մէջ դասարանը միայն մէկ անգամ կրկնելու իրաւունք:

#### **4.- Ճեմարանի վկայական**

Ճեմարանի վկայական կը ստանան աւարտական դասարանի այն աշակերտները, որոնք երկրորդական բաժնի երեք տարիներուն Ճեմարան յաճախած են, երեք տարիներու համադրուած արդիւնքով ապահոված են առնուազն 10/20 միջին, իսկ հայերէնագիտական նիւթերու մէջ՝ 12/20 միջին:

Այս պայմաններէն որեւէ մէկը չլրացնող աշակերտը կը ստանայ երկրորդական ուսման աւարտի վկայագիր:

## **Ձ.- ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

Ճեմարանի աշակերտը անդամ է դպրոցական հաւաքականութեան ու աւելի նեղ իմաստով՝ դասարանային հաւաքականութեան մը: Դպրոցական եւ դասարանային հաւաքականութեան տիրական նկարագիրը կը կազմեն բոլորին հաւասարութիւնը եւ ազատամտութիւնը:

Ազատամտութիւն ու հաւասարութիւն կ'ենթադրեն յարգանք ուրիշի ազատութեան: Ազատութեան փոխադարձ յարգումը եւ բոլորին հաւասարութիւնը կ'երաշխաւորուին կարգապահական կանոններու գոյութեամբ: Կարգապահական կանոնները մարդկային յարաբերութիւնները կարգաւորող բնական ու պարզ վերաբերումի յիշեցումներ են, որոնց յարգումը կարելի կը դարձնէ ներդաշնակ ու խաղաղ յարաբերութիւն աշակերտներու, ուսուցիչներու եւ ծնողներու միջեւ:

Մ. եւ Հ. Արսլանեան Ճեմարանի աշակերտները ունին իրաւունքներ եւ պարտաւորութիւններ:

**ա.- Աշակերտին իրաւունքները**

- 1.- Ճեմարանէն ներս իրաքանչիւր աշակերտ, անկախ իր տարիքէն, կ'արժանանայ, իբրեւ անհատ ու քաղաքացի, յարգալիք վերաբերումի:
- 2.- Աշակերտը իրաւունք ունի ստանալու իր տարիքին ու կազմաւորման համապատասխանող արդիւնաւէտ ուսում եւ դաստիարակութիւն:
- 3.- Աշակերտը իրաւունք ունի տեղեակ ըլլալու դպրոցական կանոններէն եւ գոհացուցիչ բացատրութիւն ստանալու անոնց մասին:
- 4.- Աշակերտը իրաւունք ունի յաւելեալ բացատրութիւն խնդրելու դասաւանդ ուսուցիչներէն, պայմանով որ դասին ուշադիր հետեւած ըլլայ:
- 5.- Աշակերտը իրաւունք ունի օգտուելու դպրոցի բոլոր հնարաւորութիւններէն. գրադարան, գիտաշխատանոց, ելեկտրոնային տեղեկանք, մարզական պիտոյք, եւ այլն:
- 6.- Աշակերտը իրաւունք ունի իր մասնակցութիւնը բերելու դպրոցական ներքին եւ արտաքին ձեռնարկներուն եւ միջոցառումներուն:
- 7.- Անարդար վերաբերումի արժանացած ըլլալու կասկածի պարագային, աշակերտը իրաւունք ունի բացատրութիւն խնդրելու ուսուցիչէն եւ գոհացում չստանալու պարագային՝ գանգատելու բաժնի պատասխանատուին եւ ի հարկին՝ տնօրէնին:

### **բ.- Աշակերտին պարտաւորութիւնները**

- 1.- Դպրոց յաճախել կանոնաւոր կերպով, յարգելով ժամանման եւ արձակման համար ճշդուած ժամերը: Դպրոցէն չբացակայիլ առանց արդարացուցիչ պատճառի (հիւանդութիւն կամ կանխաւ ստացուած արտօնութիւն): Դպրոցէն դուրս չգալ առանց արտօնութեան:  
 Բացակայող աշակերտները, դպրոց վերադարձին, պէտք է բերեն ծնողքին կողմէ արդարացուցիչ երկտող մը: Նախընտրելի է, որ ծնողները բացակայութեան օրն իսկ տեղեակ պահեն, հեռաձայնով, բաժնի պատասխանատուն:
- 2.- Կատարել պահանջուած պարտականութիւնները եւ բժախնդրօրէն սորվիլ դասերը:
- 3.- Ուշադրութեամբ հետեւիլ դասերուն, աշխատիլ միշտ կեդրոնացած մնալ եւ ջանալ առաւելագոյն չափով օգտուիլ տրուած դասերէն:
- 4.- Սիրով կատարել դպրոցի պատասխանատուներուն եւ յատկապէս ուսուցիչներուն թելադրանքները:
- 5.- Չխանգարել դասընկերներուն աշխատանքը:
- 6.- Հեռու մնալ վէճերէ, կռիւներէ եւ անթոյլատրելի այլ արարքներէ: Ազնիւ ու քաղաքավար վերաբերում ունենալ ուսուցիչներու, պաշտօնեաներու եւ ընկերներու նկատմամբ: Խուսափիլ անախորժ կատակներէ, անպատշաճ ու տգեղ արտայայտութիւններէ եւ բիրտ արարքներէ:
- 7.- Խօսիլ մաքուր հայերէնով, օգտագործելով պատշաճ բառամթերք եւ խօսելակերպ:
- 8.- Հոգածու ըլլալ դպրոցական շէնքին, առարկաներուն, կազմածներուն եւ գործիքներուն նկատմամբ: Չզուշութեամբ գործածել եւ պահպանել դպրոցական իրերը:
- 9.- Հոգ տանիլ դպրոցի մաքրութեան:
- 10.- Դպրոց ներկայանալ դպրոցական տարագով, մաքուր եւ կոկիկ հագուած եւ պատշաճօրէն մազերը սանտրուած:
- 11.- Մասնակցիլ դպրոցական միջոցառումներուն, թէ արտաքին եւ թէ ներքին:



12.- Բժախնդրութեամբ գործադրել դպրոցական շրջափակէն ներս, դասարանի եւ բակերուն մէջ կիրարկուող կանոնները: Այդ կանոնները, որոնք կը ճշդուին տնօրէնութեան եւ ուսուցիչներու կողմէ, նախընտրաբար աշակերտներու ալ մասնակցութեամբ, կը կազմեն ճեմարանականի վարքի ու բարքի ուղեգիծը եւ կը ներառնեն հետեւեալ կէտերը:

## **ՃԵՄԱՐԱՆԱԿԱՆ ԱՇԱԿԵՐՏԻ ՎԱՐՔՆ ՈՒ ԲԱՐՔՆ**

### **Դասարանէն ներս աշակերտէն կ'ակնկալուի.**

- ա.- Յաժ ձայնով խօսիլ: Առանց արտօնութեան չխօսիլ: Դասընկերներու հետ կողմնակի հաղորդակցութիւն չունենալ:
- բ.- Անտեղի եւ չարտօնուած տեղափոխութիւններ չկատարել ու փափկանկատ գտնուիլ դասընկերներու նկատմամբ:
- գ.- Ուշադիր հետեւիլ դասին: Չընդհատել դասը: Հարցում հարցնել ուսուցիչէն արտօնութիւն ստանալէ ետք միայն:
- դ.- Առօրեայ պարտականութիւնները կատարել ժամանակին, կոկիկ ու մաքուր, ընթեռնելի գիրով: Պարտականութիւնները կատարել ինքնուրոյն կերպով, անհատական աշխատանքով:
- ե.- Դասարանէն դուրս չելլել առանց ուսուցչի արտօնութեան:

### **Դպրոցէն ներս, ընդհանրապէս.**

- ա.- Յարգել ուրիշները, ըլլալ կիրթ ու քաղաքավար, ուշադիր՝ ընկերներու նկատմամբ: Չվիրաւորել ուրիշները:
- բ.- Գործածել կիրթ լեզու եւ խուսափիլ անպատշաճ ու տգեղ արտայայտութիւններէ:
- գ.- Պատասխանատու վերաբերում ցուցաբերել դպրոցական գոյքերուն նկատմամբ: Չանոնք պահել մաքուր եւ անխաթար:
- դ.- Դպրոց չբերել ծամօն, աղտոտող ուտելիքներ, խմիչք: Դպրոցը պահել մաքուր, աղբերը նետելով այս նպատակին համար զետեղուած զամբիւղներուն մէջ:
- ե.- Դպրոց չբերել արգիլուած իրեր, յատկապէս բջիջային հեռախօս, հաղորդակցութեան տարբեր միջոցներ, ձայնասփիւռ, խաղեր, Ֆիլմեր, անպատշաճ գրքեր ու թերթեր, եւն.:
- զ.- Դպրոցի շրջափակէն ներս չաղմկել, մնալ հանդարտ, տեղափոխուիլ առանց վազելու, խուսափիլ հրմշտուիլէ:
- է.- Չքօսանքներու աւարտին, առաջին զանգին, դադրեցնել խաղը, խօսակցութիւնը եւ արագօրէն շարուիլ: Շարքի մէջ մնալ լուռ ու հանդարտ:
- ը.- Դպրոցէն դուրս չելլել առանց արտօնութեան:
- թ.- Փոխադրամիջոցի փոփոխութեան պարագային, ծնողները պարտին հեռաձայնելով տեղեակ պահել փոխադրութիւններու պատասխանատուն:

## **Է.- ՊԱՏԺԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒՄՆԵՐ**

Տրուած բացատրութիւնները եւ կատարուած թելադրանքները պէտք է սրբագրեն սխալ արարքի հետեւանքները եւ բացառեն անոնց կրկնութիւնը:

Սակայն եթե անոնք ապարդիւն մնան, դպրոցի պատասխանատուները հարկադրաբար կը դիմեն կարգապահական տնօրինումներու: Կարգապահական տնօրինումները, յառաջատուական կարգով, հետեւեալներն են:

ա.- Ուղղորդում, խորհուրդ եւ զգուշացում բաժնի պատասխանատուին, ընդհանուր հսկիչին, ընկերային ծառայողին կամ տնօրէնին կողմէ:

բ.- Դասէ զրկում. աշակերտը դասարանէն դուրս եւ հսկողութեան տակ կը կատարէ իր դասերը, ճշդուած ժամանակամիջոցի մը տեւողութեան:

գ.- Կրկնուող զանցառութիւններու պարագային, աշակերտը կը ստանայ ազդարարութիւն ծնողքին միջոցով: Ազդարարութիւնը, համաձայն արարքի ծանրութեան, կը կատարուի նամակով (որ ծնողքը կը ստորագրէ ի գիտութիւն եւ կը վերադարձնէ), բաժնի պատասխանատուին կամ տնօրէնին հետ հանդիպումով, իսկ մասնաւոր պարագաներուն՝ համաձայնագրի մը ստորագրութեամբ:

դ.- Կախակայում: Կախակայումը երկաստիճան է.

1) Աշակերտը դպրոց կը յաճախէ, սակայն ճշդուած ժամանակամիջոցի մը ընթացքին (օր մը կամ բազմաթիւ օրեր) դասարան չի մտներ: Ան տրուած դասերուն մասին տեղեկութիւն կը ստանայ եւ զանոնք կը պատրաստէ առանձին:

2) Աշակերտը կը զրկուի դպրոց յաճախելու իրաւունքէն ճշդուած ժամանակի մը համար: Կախակայման ժամանակի աւարտին, ան դպրոց կը ներկայանայ իր ծնողքին ուղեկցութեամբ եւ դասարան կ'ընդունուի բաժնի պատասխանատուին եւ տնօրէնին հետ հանդիպումէ մը ետք, որ կրնայ համաձայնագրի մը ստորագրութեան յանգիլ:

Կախակայման միջոցին աշակերտը պարտի կատարել բոլոր տրուած պարտականութիւնները եւ սորվիլ աւանդուած դասերը:

ե.- Արտաքսում ճեմարանէն: Ծանրակշիռ յանցանքի, կրկնուող ու չարբագրուող սխալներու, յատկապէս բարոյական սայթաքումի պարագային, աշակերտը վերջնականապէս կ'արտաքսուի ճեմարանէն: Արտաքսման որոշումը տնօրէնը կ'առնէ ճեմարանի Խորհուրդին հետ խորհրդակցելէ եւ Խնամակալութեան հաւանութիւնը ստանալէ ետք:

## **Ը.- ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ ԾՆՈՂՆԵՐՈՒ ՀԵՏ**

Ճեմարանի աշակերտներու ներդաշնակ աճումին ու բազմակողմանի զարգացման համար կենսական կարեւորութիւն ունի դպրոցի ու ծնողներու կանոնաւոր ու մտերիմ կապը:

Ծնողները իրենց զաւակներուն աշխատանքին, կեցուածքին ու յառաջդիմութեան մասին կը ստանան պարբերական վիճակացոյցներ, որոնց ի հարկին կցուած կ'ըլլայ նամակ:

Անհրաժեշտութեան պարագային, ծնողները տեղեակ կը պահուին իրենց զաւակներուն վերաբերող իրողութիւններէն:

Դասարանային ծնողական ժողովներ կը գումարուին տարին երկու անգամ: Առաջինը՝ տարեշրջանի սկիզբը՝ նպատակ ունի ծնողներուն ծանօթացնել իրենց զաւակներուն ուսուցիչները եւ փոխանցել դասերու ծրագիրներուն մանրամասնութիւնները: Այս ժողովին ընթացքին ծնողներուն կը յիշեցուին դպրոցական գլխաւոր կանոնները, ինչպէս նաեւ տեղեկութիւններ կը տրուին տուեալ տարիքի աշակերտներու հոգեբանական եւ ընկերային առանձնայատկութիւններուն մասին: Կը լսուին նաեւ ծնողներու դիտողութիւններն ու առաջարկները: Երկրորդ ժողովներու շարքը տեղի կ'ունենայ կիսամեայ քննութիւններէն եւ կիսամեայ արդիւնքներու փոխանցումէն ետք: Այս ժողովներու ընթացքին, ընդհանուր գնահատականէ մը ետք, առիթ կը տրուի ծնողներուն առանձնաբար խորհրդակցելու իրենց զաւակներու ուսուցիչներուն հետ:

Բացառիկ ծնողական ժողովներ կը գումարուին ըստ կարիքի, քննելու համար դասարանի մը վերաբերող յատուկ հարց մը: Կը կազմակերպուին նաեւ դասախօսական բնոյթի հանդիպումներ, հոգեբանական ու մանկավարժական գիտելիքներ փոխանցելու համար:

Անկախաբար ժողովներէն, ծնողները կրնան տեսակցիլ ուսուցիչներու, բաժնի պատասխանատուին, ընկերային ծառայողին, դպրոցական հոգեբանին, կրթական տեսուչին եւ տնօրէնին հետ, իրենց զաւակներուն ուսման վերաբերող այլազան հարցերու քննարկման համար: Այս տեսակցութիւնները, որոնք տեղի կ'ունենան յատուկ ժամադրութեամբ, կը կատարուին թէ՛ տնօրէնութեան եւ թէ՛ ծնողներու նախաձեռնութեամբ: Ուսուցիչներու հետ հանդիպումները պէտք է կատարուին դպրոցէն ներս, բաժնի պատասխանատուին ներկայութեամբ:

